ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՍ **ԵՐԱԶՈՒՄ ԵՄ** ԴԱՌՆԱԼ **ԲԺԻՇԿ...**

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՆՁ ՕԳՆԵԼ
ՀԱՍՆԵԼ ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻՆ

#ԵՂԻՐՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՍ **ԵՐԱԶՈՒՄ ԵՄ** ԴԱՌՆԱԼ **ԳԻՏՆԱԿԱՆ...**

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՆՁ ՕԳՆԵԼ
ՀԱՍՆԵԼ ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻՆ

#ԵՂԻՐՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՍ **ԵՐԱԶՈՒՄ ԵՄ** ԴԱՌՆԱԼ **ՖՈՒՏԲՈԼԻՍՏ...**

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՆՁ ՕԳՆԵԼ
ՀԱՍՆԵԼ ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻՆ

#ԵՂԻՐՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՍ **ԵՐԱԶՈՒՄ ԵՄ** ԴԱՌՆԱԼ **ՃԱՐՏԱՐԱՊԵՏ...**

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՆՁ ՕԳՆԵԼ
ՀԱՍՆԵԼ ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻՆ



#ԵՂԻՐՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՍ **ԵՐԱԶՈՒՄ ԵՄ** ԴԱՌՆԱԼ **ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ...**

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԻՆՁ ՕԳՆԵԼ

ՀԱՍՆԵԼ ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻՆ



#ԵՂԻՐՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

«Դասավանդի՛ր, Հայաստան»

կրթական հիմնադրամն իրականացնում է Առաջնորդության զարգացման ծրագիրը՝ հանուն կրթական հավասարության եւ երիտասարդների կարողությունների հզորացման:

Ծրագիրը բացառիկ հնարավորություն է ընձեռում երիտասարդներին՝ անկախ իրենց մասնագիտությունից, միանալ մեր շարժմանը, աշխատել լավագույն մասնագետների հետ՝ միեւնույն ժամանակ նպաստելով Հայաստանում կրթության որակի բարձրացմանն ու գյուղական համայնքների զարգացմանը:

Մենք առավել որակյալ կրթություն ստանալու հնարավորություն ենք ընձեռում Հայաստանի բոլոր երեխաներին՝ անկախ իրենց բնակավայրից եւ սոցիալ-տնտեսական կարգավիճակից: Ծրագրի մեր մասնակիցները սեփական օրինակով սահմանում են դասավանդման նոր չափանիշ, կարողանում են նոր մեթոդների շնորհիվ առավել արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացն ու աշակերտների ներգրավվածությունը դրանում: Համախոհ մասնակիցների խմբի, համայնքների, աշակերտների, նրանց ծնողների, այլ ուսուցիչների ու աջակիցների շնորհիվ թիմը միավորվում է մեկ տեսլականի շուրջ՝ գերազանց կրթությունը հասանելի դարձնել բոլոր երեխաների համար:

Ընտրական փուլերը հաղթահարելով՝ Ծրագրի մասնակիցները վերապատրաստվում եւ շարունակում են իրենց աշխատանքը դպրոցներում՝ ստանալով «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ծրագրի մասնակցի կարգավիճակ:

Նպատակը.

Մենք հավատացած ենք, որ Հայաստանի բոլոր երեխաներն ունեն մեծ ներուժ, որի բացահայտման եւ ճիշտ ուղղորդման արդյունքում կարող ենք հզորացնել մեր համայնքներն ու զարգացնել դրանք: Այդ ամենի հետ մեկտեղ ծրագրի մասնակից դարձած երիտասարդները կստանան անձնային աճի բազում հնարավորություններ:

Առավելություններ.

- *Առաջնորդական հմտությունների զարգացում եւ վերապատրաստող մասնագետների շարունակական աջակցություն*
- *Մեր գործընկեր կազմակերպություններում մասնագիտական զարգացման հնարավորություններ*
- *«Դասավանդի՛ր, Հայաստան» եւ «Կրթություն բոլորի համար» (Teach For All) ծրագրերի շրջանավարտի կարգավիճակ*
- *Ուսուցչի որակավորման կամ մանկավարժության մագիստրոսի աստիճանի ձեռքբերման համար ուսումնական վարձի վճարում*
- *Ամսական դրամական աջակցություն*

Նվազագույն պահանջներ.

- *2020 թ. հուլիս ամսվա դրությամբ բակալավրի աստիճանի առկայություն*
- *Հայերենի գերազանց իմացություն. բանավոր եւ գրավոր հաղորդակցման գերազանց հմտություններ*
- *ՀՀ-ում աշխատանքի թույլտվության եւ սոցիալական քարտի առկայություն*
- *Երկու տարի ժամկետով դասավանդման պարտավորություն՝ 2020թ. հուլիսից մինչեւ 2022թ. մայիսը ներառյալ*

Դիմելու կարգը.

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ ***լրացնելով առցանց հայտադիմումը www.teachforarmenia.org կայքում****: Մեր հավաքագրման եւ ընտրության թիմն անպայման կապ կհաստատի ձեզ հետ: Առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով մեր կայքը կամ ուղարկելով նամակ* ***apply@teachforarmenia.org*** *հասցեին:*